









ևաքը տակաւին միտերք ունէր զինելու հինգ անգամ աւելի թուով մարդիկ քան որ էր Հոռոմայեցոց պատերազմի հանածները, եւ պաշար՝ նոր բանակագորը հինգ տարի ապրեցընելու. գտնուեցաւ մանաւանդ ցորեն ու աղած մսեր, ո՛չ գինի, բայց քացախ եւ ընդեղէններ՝ տեսակ մ'ըմպելի պատրաստելու համար<sup>271</sup>: Վերջապէս այս հատուկտիր տեղեկութիւնները կարծել կու տան թէ Սասանեանց հոգաբարձութիւնն ալ, Բիւզանդացոց հոգաբարձութեան պէս՝ ինչպէս պիտի տեսնենք, շատ անկանոն եռանդ մը կը ցուցընէր: Նոյնպէս ուղտեր կը գործածէր իբրև պարենակիրներ, եւ մանաւանդ ջրոյ համար<sup>272</sup>:

Բէլիսարի մէկ ճառախօսութեան (adlocutio) մէջ կը գտնենք հետեւեալ վճիռը<sup>273</sup>. «Քաջութեամբ կը գերազանցէք Պարսիկները. միայն թէ անոնք ձեր վրայ ունին կարգապահութեան առաւելութիւնը եւ կը փտահին միայն ձեր անկարգութեան վրայ<sup>274</sup>»: Ասի ճիշդ կ'երեւայ: Եւ նախ, եթէ նաեւ Իրանի մէջ յաճախ տեղի ունեցան պալատի յեղափոխութիւններ, բանակները ասոնց հաւատարմութիւնը միշտ յարգանաց արժանի է<sup>275</sup>: Լաւ մտադիր ըլլալու է որ հոս կը խօսիմ այս զօրաց ազգային մասին նկատմամբ. այն օգնական զնդերը՝ զոր Սասանեանք ալ կը ձարէին՝ թէեւ աւելի նուազ թուով քան թէ Բիւզանդացիք, այս փորձուած հաւատարմութիւնը չունէին<sup>276</sup>: Պետրայի միջնաբերդին մէջ մնացած պարսիկ զինուորները՝ յարձակմամբ առնելէն ետքը՝

271 Պրոկոպիոս, Պ. Գ., Դ, 12, 17—20:  
 272 Հմմտ. Թէոփ. Միմոհ., Բ, 2, 4:  
 273 Պրոկոպ., Պ. Գ., Ա, 14, 21:  
 274 Հմմտ. Բելիսարի զինուորները՝ որ կը ցրուին Տակաւին յառաջ, որպէս զի թուզ ուտեն (Պ. Գ., Բ, 18, 18):  
 275 Յուլիանոսի ատեն հոռոմայեցի զինուորները ահանէ մը մտած էին Մայոգամալքացի մէջ, սպաննելով իրենց հանդիպած պահակները, ազգին ամպրակաւ համաձայն արքային արքարութիւնն ու երգանկութիւնը գեղգեղաձայն երգերով դրուատելով (Ամմ. Մարկեղ., ԻԴ, 4, 23 ex usu moris gentici iustitiam felicitatemque regis sui canoribus vocibus extollentes).  
 276 Եզրայի Եգիպտական Տեսլան պարունակած ահանքը պարսիկ բանակին մէկ ապստամբութեան մասին, որ իբր Ողենաթի եւ Աւրղիանու ժամանակն ըլլաց, անաղանադոյն ընդմիջարկութիւն մըն է (A. v. Gutschmid, Kleine Schriften, II, 1890, p. 211—284. Հմմտ. տող 38): Պարսիկ զնդերուն բացառիկ ապստամբութեան մը Լազիկէի մէջ անկէ ծագեցաւ որ Որմիզը արքայն՝ պարսութեան մ'ի պատիժ՝ շնորհազուրկ ընել ուղից Վահրամ զօրավարը (Թէոփ. 263. յաւ. Թէոփ. Միմ., Գ, 18, էջ 147—149):

աւելի յանձն առին այրուիլ քան թէ անձնատուր ըլլալ<sup>277</sup>: Ընդհակառակն Ամդայ պաշարման ատեն Դոլոմացիք քակտուեցան ցրուեցան՝ հազիւ թէ երբ գործը ձախողելու երեւոյթն սկսաւ առնուլ<sup>278</sup>:

Այս ոտիները զարհուրելի էին նաեւ իրենց արհամարհութեամբ մահուան եւ պատերազմի արիւնալից հետեւութեանց հանդէպ այն համակերպութեամբը, զոր կ'ակնարկէ Ռազմագիտականը: Մարդու մը կեանքն ասոնց քով ոչինչ բան կ'արժէր. ասոր իբր ազաջոյց կ'ուզեմ յիշել միայն այն հարեւանցի խնամքները՝ զոր կ'ընէին վտանգաւոր հիւանդութեամբ մը բռնուող զինուորին: «Ձանի ուրիշներէն կը բաժնեն, եւ կենդանի ընկեցիկ կ'ընէին՝ անոր քով թողլով քիչ մը հաց, ջուր ու գաւազան մը, որպէս զի կարենայ անուղ ունենալ եւ գահանաց դէմ ինք զինք պաշտպանել<sup>279</sup>»: Միայն վերադարձին խնամ կը տանէին արշաւանքի մը զօհերուն: Մեկնելու ատեն, կ'ըսէ Պրոկոպիոս<sup>280</sup>, արքայն գահի վրայ բազմած կը դիտէր բանակին զօրահանդիսանցները. իւրաքանչիւր զինուոր երբ կ'անցընէր՝ նետ մը կը ձգէր մեծ կողովներու մէջ, որոնք յետոյ կը կնքուէին: Երբ զնդերը կը վերադառնային, իւրաքանչիւր ոք նետ մը կ'առնուր անկէ. ասով կը տեսնուէր պակասմանը թիւը: Հեփթաղաց մեծ փոսին մէջ կատարուած ճապաղիքէն<sup>281</sup> ետքը՝ այնպիսի փորձանքի մ'առջեւ առնելու համար արգելուած էր հալածել հակառակորդն անոր երկիրներուն վրայ, եթէ նաեւ խուճապաւ փախչէր<sup>282</sup>: Ասի ռազմագիտական տեսակետով թերեւս քննադատելի տրամադրութիւն մըն էր, բայց ասով աւելի ապահով էր թշնամուոյն քով մեռեալներ կամ վիրաւորներ չձգելու:

Պարսիկ զօրաց կարգապահութիւնը յառաջ կու գար ուրիշ զգացումէ մըն ալ. իրենց մէջ զօրավարին հանդէպ ունեցած յարուստն ա՛յնպէս արմատացած էր որ անոր մահը զիրենք բոլորովին կը վհատեցընէր<sup>283</sup>: Հոռոմայեցիք գիտէին այս բանս. եւ Միհր-

277 Պրոկոպ., Պ. Գ., Դ, 12, 15 եւն:  
 278 Անդ, 14, 42:  
 279 Արաթիս, Բ, 10, 3:  
 280 Պրոկոպ., Պ. Գ., Ա, 18, 52—54:  
 281 Տես վարը՝ ռազմահանարից մասին:  
 282 Պրոկոպ., անդ, Ա, 4, 33:  
 283 Օրինակ՝ Լազիկեան պատերազմին մէջ անձիջնապէս փախուստի դիմեցին (Պրոկոպ., Պ. Գ., Դ, 8, 35):

մահրով ծեր հերոսը զաղափար մը յղացաւ նոյնը գործածել իբրև ռազմահանարք մը դժուարին կացութենէ մ'ազատելու համար: Հիւանդ ձեւացաւ եւ յետոյ լուր հանել տուաւ թէ մեռած է. մատնիչները՝ որ թշնամիներէն վարձուած էին պարսիկ բանակետը լրտեսելու՝ կասկած չունեցան ասոր ստույգութեան մասին: Բիւզանդական՝ բանակն ասոր վրայ թուրացաւ ամբողջեան իւր աշխատութեանց մէջ. եւ ժիրաժիր հսկողութեան մէջ: Եւ Միհրմահրով օգուտ քաղեց ասկէ յանկարծակի յարձակում մը գործելով, որով թշնամին փախուստի խուճապեց<sup>284</sup>:

Սասանեանք շատ խիստ էին իրենց տեղակալաց նկատմամբ: Լազիկէի մէջ պարսիկ զնդերու ապստամբութեան մը պատճառն էր այն շնորհազրկութիւնը՝ որով Որմիզը արքայ պատուհասեց Վահրամ զօրավարը՝ կրած մէկ պարտութեան հետեւութեամբ. զինուորները թեր էլան իրենց զօրապետին<sup>285</sup>: Խոսները թեր էլան հետուն կ'երթար. մահապարտով Բ. աւելի հեռուն կ'երթար. մահապարտ կը պատժէր յաղթուած զօրավարները<sup>286</sup>:

Շատ անկանոն բան մըն էր Երանեան իշխանաց անձամբ մասնակցութիւն ունենալը Կայսրութեան դէմ մղուած պատերազմներուն մէջ: Արշակունիք վարեցին քանի բազմաթիւներէն: Արշակունիք հրամատար մ'արշաւանքներ, բայց յաճախ հրամատարութիւնը կը թողնէին Սուրէնի: Առնուազն կ'երեւայ թէ Կրասոսի յաղթող այն անձն՝ որ այսպէս կը յորջորջուի, արդէն նոյն ասոր տիճանն ունէր՝ որ յետագոյն ժամանակներուն մէջ կը նշանակուի իբր «Երկրորդ ներուն մէջ կը նշանակուի իբր կեանքը տուէր. մատնուէին՝ երբ պետը իւր կեանքը տուէր. քաղաքներուն մէջ Բաղուրի գլուխը կը պտտցընէին՝ որպէս զի սրտաթափութիւնը անեցընեն<sup>288</sup>. եւ երբ Արտաւանի որդին Որոզ մեռած կարծուեցաւ՝ անմիջապէս ճապատարութիւն ընդունեցաւ ի նպաստ Հոռոմայեցոց<sup>289</sup>:

Արդ աւելի աղիտարեր կ'ըլլային հետեւութիւնք՝ երբ նոյն ինքը վհատեան տեսնուէին իրեն թելակալ դրած մէկ իյնար քան թէ իրեն թելակալ դրած մէկ

284 Արաթիս, Բ, 9, 6:  
 285 Տես վերը, ճ. 276:  
 286 Նէօրէզէ, Տարաթի, էջ 352, 356, 364:  
 287 Պրոկոպիոս, Կրաս., 23:  
 288 Դիոն Կաս., ԽԹ, 20:  
 289 Դիոն Կաս., Տար. 2, 35: — 2. զարուն վերջը կոմմենտարիոն յաղթեց Պարսից, «որոնք չէին համարձակեր իրենց թագաւորին»:

զօրավարը: Ուստի Պարսից կրօնական եւ քաղաքական օրինօք պարտաւորուած չէր թագաւորը մասնակցիլ կորուստուն, եւ սովորաբար ալ բացակայ էին: Սակայն օր մը Շապուհ՝ Ամդայ առջեւ իւր բանակին կրած անկերջ ձախողանքներէն սրտաբեկ՝ «պարզ զինուորի մը պէս նետուեցաւ խառնուրդին մէջ, բան մը որ մինչեւ այն ատեն տեսնուած չէր<sup>290</sup>»: Աչքի կը գարնէ որ ստորին կայսրութեան շրջանին մէջ ռազմագիտութեան տեսականագէտներն այնչափ մեծ պնդութեամբ կը կրկնեն թէ պետն անձամբ վտանգի մէջ մտնելու չէ. եթէ իյնայ՝ չփութութիւն կը տիրէ շարքերուն մէջ<sup>291</sup>:

Պարսք ունեցած են քանի մ'արտակարգ զօրապետներ, ինչպէս այն անվեհեր Միհրմահրով, որ կքած էր տարիներու բեռան տակ, հիւանդագին էր եւ ձի հեծնել չէր կրնար եւ դեսպակով կը տարուէր իւր բանակին մէջ<sup>292</sup>: Բայց Խոսրոօները կամ անոնց նմանները՝ շատ աւելի քան հոռոմեան Կեսարները՝ միշտ եթէ ո՛չ բուն ճակատախիլներ վրայ, գոնէ մօտն էին: Ասով կ'ապահովուէին տեսութեանց աւելի մեծ միութիւն մը եւ աւելի ճիշդ հնազանդութիւն մը: Այս կէտին նկատմամբ երկու պետութեանց մէջ տարբերութիւն մը կայ՝ զոր պէտք էինք նշանակել:

Ասոր հակառակ քանի մը յայտանիչներ կան այն մասին թէ Խոսրով Ա. տրամադրութիւն ունեցած է — եւ թերեւս ուրիշներ ալ ունեցած էին — ներշնչուելու բիւզանդական օրինակէն՝ սահմանադրութիւններու վարչութեան ու պահպանութեան համար իւր ըրած հանձարեղ կարգադրութեանց համար<sup>293</sup>: Պրոկոպիոս խօսելով պարսիկ աստիճանաւորի մը վրայ՝ զոր Քանարանգ կը յորջորջէ<sup>294</sup>,

290 Ամմ. Մարկեղ., ԺԹ, 7, 8:  
 291 Մորիկ, Ռազմադ., Բ, 15, էջ 70. է, 1, էջ 136: — Եթէ Երուսաղէմի պաշարման մէջ «զինուորները կը թախանձէին զՏիտոս՝ իւր ա՛յնպէս թանուորները կը թախանձէին զՏիտոս» (Յովսէպ., Պ, 2., կադին կեանքը վտանգի մէջ չընէլ) (Յովսէպ., Պ, 2., 87), պէտք էնք՝ կարծեմ՝ հոս տեսնել միայն նշան մ'առնանք յարման անոր հանդէպ: Բայց տարբեր են մ'առնանք յարման անոր հանդէպ: Բայց տարբեր են իբրև հինգ զար ետքը, երբ զինուորները կը բռնադատեն պետ մը՝ վերջապահ զնդին մէջ քաշուելու (Թէոփիլ., Միմոհ., Բ, 2, 10):  
 292 Արաթիս, Բ, 10, 2:  
 293 Նէօրէզէ, Տարաթի, էջ 160, ճ. 3:  
 294 Պրոկոպ., Պ. Գ., Ա, 5, 4 (Հմմտ. Ա, 21, 15): Քանարանգ (Χαναράγγης) աստիճան մըն է (որ Պարսկաց քով զօրավար է = σιστραγόος) որ Պարսից երկիրն սահմանադրութիւն ունի երկրէ մէջ՝ որ սահմանակից է Հեփթաղաց: Հայ հեղինակներն այս տիտղոսը կը բացատրեն մարգարան համազօր բառով (Journ. As., 1866, I, p. 114):

կ'աւելցընէ թէ սահմանադրութիւն-գաւառի մը զօրաց հրամատարն էր<sup>295</sup>, ուստի հոսմէական դէսի (dux) նման բան մը: Միւս կողմանէ կ'երեւայ թէ Մենանդը՝ բնագրի մը մէջ՝ որուն մեկնութիւնն անստոյգ է, զուգակշռութիւն մը կը դնէ երկու պետութեանց պաշտօնակալաց մէջ՝ որոնք հաւասարապէս պաշտօն ունէին սահմաններու վրայ ոստիկանութիւն ընելու<sup>296</sup>: Վերջապէս Թէոփիլակոսոս Սիմոկատոս աշխարհարանակի պետին հետ կը նոյնացընէ այն պարսիկ սպայն, զոր Փերուխան կը յորջորջէ<sup>297</sup> եւ կ'անուանէ Հայաստանի աշխարհարանակին մէկ պետը՝ զոր Պարսից արքայն կ'որոշէ:

Կը խոստովանիմ թէ ասոնք թերեւս բռնազրօսիկ համեմատութիւններ ըլլան. յատկապէս Թէոփիլակոսոս՝ որ զինուորական մը չէր, կրնար այս խնդիրներուն մէջ չափազանց պարզացման ոգի մը կրել: Սակայն եւ այնպէս կը կարծեմ թէ հրամատարութեան այս խնդիրն՝ ինչպէս շատ մ'որիշ նիւթերու մէջ, ընդհանուր կերպով մը՝ փոխադարձ ազդեցութեան հետքեր գտած ըլլամ, որով թէ՛ մէկ եւ թէ՛ միւս կողմը փոխառութիւններ ըրած են, թէպէտ եւ այս նմանողութիւնը սահմանափակ էր:

Եթէ այս զուգակշռութիւնը տակաւին տարակուսական ալ ըլլայ զինուորական վար-

չութեան խնդիրներուն մէջ, շատ աւելի նուազ է նոյնը ուղղագիտութեան եւ զնդերու կազմակերպութեան սահմաններուն մէջ: Այլեւայլ կէտեր նոյնը նախազգալ տուած են մեզի. աւելի յստակ պիտի ըմբռնենք իրը՝ երբ ուսումնասիրենք բիւզանդական հաստատութիւնները: Ոչինչ կայ ասկէ աւելի յարմար՝ պայծառօրէն արտափայլել տալու համար այն մասնաւոր դժուարութիւնները, զոր կը յարուցանէր այս «Արեւելեան խնդիրը» Յուստինեանու ատեն: Երկու ոստիկանութիւն մէջ մէկուն հանդէպ եղած խանձումը պատճառ կ'ըլլար այսպէսով միւսին յառաջադիմութեան: Բացայայտ է թէ Պարսիկները՝ որչափ ալ ժառանգական եւ յամառ ատելութիւն ունէին, չզանգաղեցան հոռոմէական մարտագիտութեանն առնուլ սեպհականացընել ինչ որ իրենց օգտակար կ'երեւար: Ասոնք ոխերիմներ էին շատ արժանի անոնց՝ որոնց դէմ մաքառեցան չորս դար ամբողջ, եւ կրնայ ըսուիլ թէ, մանաւանդ հակառակամարտ ոստիկանական վերջին ժամանակը, իրենց բանակը՝ բարձրագոյն աստիճանով մը՝ կը ներկայացնէր բիւզանդեան զօրազնդերու բարեյաակութիւններն ու թերութիւնները: Այս գլխաւոր կէտին պիտի վերադառնանք:

(Շարունակելի: ) Հ. Յ. ՏԱՇԵԱՆ

**ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ՎՆԵՔԵՐԸ**

Ա.

**ԳԱՐԱՆԱԳՆԱՅ ՎԱՆՔԵՐԸ**

Բարձր Հայքի առաջին գաւառն է Դարանաղեաց գաւառը, որ այժմ կը կոչուի Կամա կամ Քէմախ: Սահմանակից է Եկեղեաց (Երզնկա) գաւառի: Եղած է Գրիգոր Լուսաւորչի եւ անոր յաջորդներու գործունէութեան ասպարէզներէն եւ օժտուած բաւական թուով վանքերով:

1. ԱՒԱԳ ՎԱՆՔԸ

«Սեպուհի ստորոտը, 12 տունէ բաղկացեալ գուտ Հայաբնակ Կարնի գիւղի մօտ<sup>1</sup>,

<sup>1</sup> Վարդան աշխարհագիրը կը գրէ. «Անդ է (ի Սեպուհ) եւ վանքն Սերոփէից... Եւ մերձ նորա կայ հոգեակաւոր սուրբ ուխտն Աւագ, զոր հիմնարկեալ է Թաղէսու եւ կայ յետ նորա ժառանգ որդին իւր, դասօն կորուսեալ հօտիս, յանուն սուրբ առաքելոյն Թաղէսի եւ կայ ի նշխարաց նորա անդ գարմանաչէն զեղաթափն...» (Saint-Martin, Mémoires, II, էջ 432):

<sup>295</sup> Մենանդը, «Բաղուածք վասն պատուիրակի Հոռոմ» (Excerpt. de legat. Roman., Migne, PGL, CXIII, p. 920 C = հրատ. De BORG, p. 216, l. 25-27). «Սահմանաց պաշտպան (προϊκτωρ) կոչուածը (եւ ասի Հոռոմացեաց քով կը նշանակէ՝ այս տեղ զուգակազմուած աստիճանին համեմատ արքունի Հոգաբարձու = τὸν βασιλείου κροσκαπαστήν)»:

<sup>296</sup> Անդ, Գ, 2, 2: Որմիզդ... պատերազմի ինքն-իշխան առաջնորդ կարգեց Փերուխան Պարսիկը (αὐτοκροατορα τοῦ πολέμου προεστῆσατο φεροζάγγη τον Πέρσην) իսկ այս անունը մազիտարոսի աստիճանը կը շուրջնէ Հոռոմոց լեզուաւ (τοῦ δνομα τῆν τοῦ μαγιστροῦ ἀξίαν τῆ Ῥουαίξῃ εννομαινεται γλώττη). Ճիշդ խօսելով՝ այս ամէնը բաւական երբեք է: Արդեամբք Փերուխանի տեղ պէտք էր սպարապետը (նորաձեւ՝ սպահապետ, spahpat) բարը (Նէօրէքէ, Տապարի, էջ 444) համեմատել բանակի պիտի հետ, բացատրութիւն մը՝ զոր Պրոկոպիոս այլեւայլ տեղեր Պարս. Պատերազմ գրոց մէջ կը թարգմանէ Ἀσπέβεδος գրելով, բայց խնդիր է թէ՛ իրեն համար՝ առիկա մարդու յատուկ անուն մը չըլլայ, եւ ո՛չ թէ պաշտօնի մը յայտարարը: Մի եւ նոյն խորհրդածութիւնն ընել աւելի ալ անհրաժեշտ է Թէոփիլանիսի Ἀσπέτιος յորջորջանաց համար: Եւ նոյն իսկ եթէ բիւզանդեան հեղինակները յատկօրէն բացատրած ըլլային, ասի չէր նշանակիր թէ որ եւ է վիթխութիւն մ'ըրած չըլլան: Այսպէս Մենանդրի Պրոտեկտորի համար (Հատակոտոր 11) Չիկ (Չիչ) պատուաստիճանն (ἀξίωμα) մըն է. Արաթիտի համար (Գ. 30, էջ 275)՝ անունն (δνομα) մը. իսկ արդի արեւելագիտաց համաձայն՝ հաւաքական անուն մըն է աւատական մեծ գերդաստանի մը, ինչպէս էր Սալթէն բացատրութիւնը:

<sup>297</sup> Թէոփ. Սիմոկ., Գ, 5, 15. ο̄ κατὰ τὰς Αρμενίας τὰς στρατηγίδας λαχών.

յայն ձորակի մը եզերքը կը բարձրանայ Աւագ վանքը, որ կառուցուած է յանուն Թաղէսու եւ Բարթոլոմէոս առաքելներուն: Մենաստանին թանձր ու բարձր պարիսպներու նստանիւթը շատ ընդարձակ է: Հոն կը տեսնուին տակաւին կիսափուլ ջրաղացը, բաղնուին տակաւին կիսափուլ ջրաղացը, բաղնուին սենեակներ: Տաճարը՝ հոյակապ եւ աւելի սենեակներ: Տաճարը ընծայուած սիրուն է, ազգային սուրբերու ընծայուած սեղաններով եւ գեղեցիկ նկարներով զարդարուած, նոյն իսկ սրբավայրին հիւսիսային եւ հարաւային պատերը: Այս մենաստանը իր նմանը չունի նոյն իսկ Եկեղեաց գաւառի բազմաթիւ վանքերու մէջ: Գժրախօսաբար գմբէթը երկրաշարժէն վնասուած է ծանր կերպով» (Սիմոն, 1927, էջ 213):

Աւագ վանքը կոչուած է նաեւ Ս. Թաղէսու եւ Բարթոլոմէոս Առաքելոց, Կառնոյ դէսու եւ Բարթոլոմէոս Առաքելոց (կամ Գառնոյ վանք, որուն մասին այլուր), Լուսաւորչի վանք, ինչպէս եւ Տէրէվանք<sup>3</sup> (Հմմտ. Բիւզանդիոն, Թ. 1067 եւ անդ 1902, թ. 1680, Մասիս, 1892, էջ 113, ուր Բարձր Հայքի եւ ուրիշ վանքերու նկատմամբ խօսք կ'ըլլայ):

Աւանդութիւնը անոր հիմնարկութիւնը Թաղէսու առաքելալի եւ Գրիգոր Լուսաւորչի կ'ընծայէ եւ այն շատ հետեւողական է այս վերջինին համար: Չէ՞ որ անիկա Եկեղեաց վանքի մէջ ապրած ու ճգնած է եւ հարգաւորին մէջ ապրած ու եկեղեցի կանդակաւ ուշադիր եղած վանք ու եկեղեցի կանդ-

Յակոբ Կարնեցին կը հաւատէ՝ թէ Աւագ վանքը կը գտնուի ի Թորդան (Տեղադիր վերին Հայք, Վաղարշապատ 1903, էջ 13), իսկ Թորդան գիւղը հիմնուած է Սեպուհ լեռան արեւմտեան կողմը (Գ. Սիւրմէեան, Երզնկա. Գաճիքէ 1947, էջ 88):  
<sup>2</sup> Յօդուածագիրը՝ Երանոսեան, մէկ տաճար կը որ ներշնչայ մէջ պաշտօնավարած է, մէկ տաճար կը յիշէ, մինչ «Արարատ» յօդուածագիրը (անդ, 1901, Աստուածածին եւ սուրբ Առաքելոց (անդ, էջ 364), իսկ Սիւրմէեանի եւ Պալեանի ծանօթ են երեք տաճար՝ Ս. Աստուածածին, Ս. Թաղէսու եւ Ս. Կարաէջ 364), իսկ Սիւրմէեանի, 1902, Թ. 1180 տաճար՝ Ս. Աստուածածին, Ս. Թաղէսու եւ Ս. Կարաէջ 364), իսկ Սիւրմէեանի, 1902, Թ. 1180 տաճար (Հմմտ. անդ, էջ 88, Բիւզանդիոն, 1902, Թ. 1180 տաճար (Հմմտ. անդ, էջ 79): Այս վերջիններու խօսքը եւ Ծաղիկ, 1909, Թ. 79): Այս վերջիններու, որոնք նոյն կը հաստատեն միջատակարարութիւնները, որոնք նոյն իսկ չորս տաճար գիտեն (Հմմտ. վարը):  
<sup>3</sup> Գրիգոր Դարանաղեացին կը գրէ. «Եւ աղա զեւրահազակ սրբազան սուրբ աթոռն Աւագ վանքն, որ չորեք դասատուներ վարդապետաց Աւագ վանքն, որ չորեք սասան զիտով մեծ խորհրդով ունի Աւագ վանք կողմնային, զոր գրել ձանձրութիւն է մեզ գրելոյ եւ խողաց տաղտկութիւն» (Ժամանակագրութիւն, էջ 512):  
<sup>4</sup> Աստուածաշունչի մը համաձայն, զրուած Օշին թաղաւորի օրով, Աւագ վանքը ինձմէս անոս մէկ մաքառուորի օրով 53 թուականին եւ անոս մէկ մաքառեալ Գրիգոր Ս. Աստուածածինը, մինչ միւսները յետուոր՝ յանուն Ս. Աստուածածինը, Գրիգոր Ս. Թաղէսուի եւ Ս. Կարապետի (Սրեւեթ, 1886, Թ. 853):

ներու: Սակայն այս բարեօրացիկ մտածութիւն եւ եզրակացութիւն է:

Աւագ վանքի մասին մեր ունեցած հաստատի ծանօթութիւնները շատ ուշ ժամանակէ կը սկսին: Ամէն պարագային ԺԳ. դարէն յառաջ արդէն հիմնուած էր եւ հոն կ'ապաստանէր Վարդան վարդապետը, ու «ծառայէր վարդապետին եւ կրօնաւորացն լուսեմար» (Ա. Կիլիսեան, Հաւաքումն յիշատակարանաց հայ. Չեռագրաց, անտիպ, էջ-միածին Թ. 1669): Վարդան ինքնին իր մասին կը վկայէ. «Յանդ երեալ կատարեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Վարդանայ յետանեալ եւ անպիտան կրօնաւորի... ի դաւանիս որ կոչի Դարանաղեաց ի լերինս Սեպուհ... յորում կայ հանգստարան սուրբ Լուսաւորչին առնթեր գօրով վկայուհոյ բնակութեան եւ շիրմին, որ կոչի Մանէայրբ... ի մենաստանիս որ կոչի Աւագ վանք առ դրան սրբոյ Աստուածածնիս եւ սուրբ Կարապետին եւ սուրբ Առաքելոցս ի մէջ աստուածասէր ճգնաւոր եղբարց...» (Հայաստան, 1848, Թ. 102):

Աւագ վանքը 1227ին արդէն ծաղկած վիճակի մէջ էր, ինչպէս կը հաւաստէ յիշատակարան գրող մը. «Արդ ի թուականութեան Հայոց ՈՉՁ (1227) եւ նուստ ծերս եւ անպիտան ծառայս Աստուծոյ Տուրք անուն կոչեցեալ ի լուսաւորութեան սրբոյ աւագանին, ցանկացող եղէ վարուց եւ պատմութեանց սրբոց հարցն... ստացա(յ) զսա յարգեանց իմոց յիշատակ բազմամեղ անձին իմոյ... իսկ այսմ բարի առաջարկութեանս եղեն մեզ թերադիր եւ առիթ եւ յորդորչ սուրբ եւ պատուական հարքս եւ առաջնորդ սուրբ ուխտիս Աւագ վանացս՝ Ստեփաննոս, Պետրոս, (Յո՞հ)ան, որ է ի լերին սուրբ Լուսաւորչին մերոյ գաւառիս Դարանաղեաց գերաւորչին սուրբ մենաստանս զարդարեալ զեղեցկաչէն սրբարանաւք եւ սպասիւք պատուականաւք, հիմնացեալ սուրբ քաւատականաւք, հիմնացեալ սուրբ քաւատականաւք յանքս՝ մինն յանուն սրբոյ Աստուածածնին եւ երկրորդն յանուն սրբոյ Կարապետին Յովանու, երրորդն յանուն սրբոյ Առաքելոցն եւ միւս եւս յանուն սրբոյն Ստեփաննոսի նախավկայի: Եւ եղի զսա ի դուռն երկնահանգէս սուրբ քաւարանացս իբրեւ զարձան յուսեղէն միջնորդ եւ բարեխաւս ունելով... Տէր Աստուած, ողորմեա Տրոց միայնակեցի ստացողի գրոցս եւ հայր Ստեփաննոսի եւ գրչի անկրապնեիտին (= Կարապետի = ան-